ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀՀ-ՏՄՊՊՀ-ԳՀԾՁԲ-20/35 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

Քաղ. Երևան 08 հունիսի 2020թ.

2020թ-ի մայիսի 25-ից հունիսի 8-ը, Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի գրասենյակում՝ ՀՀ, ք. Երևան, Միեր Մկրտչյան 5Բ հասցեում, տեղի ունեցավ ՀՀ-ՏՄՊՊՀ-ԳՀԾՁԲ-20/35 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի հետևյալ անդամները՝

Նարա	Դավթյան	Հանձնաժողովի վարչատնտեսական վարչության պետ.
Աննա	Յոլչյան	Հանձնաժողովի վարչատնտեսական վարչության պետի տեղակալ.
Անուշ	Ստեփանյան	Հանձնաժողովի քարտուղարության պետ.
Մերի	Ղազարյան	Հանձնաժողովի հաշվապահական հաշվառման բաժնի պետ-գլխավոր հաշվապահ.
Մոշչենոկ	Միխայիլ	Հանձնաժողովի նախագահի օգնական:

Հանձնաժողովի նիստին ներկա էր հանձնաժողովի քարտուղար Արմինե Ավետիսյանը՝ «Լաճ Գրուպ» ՍՊԸ ներկայացուցիչ:

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից, իսկ հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Նարա Դավթյանը, իսկ քարտուղարն էր՝ Արմինե Ավետիսյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. ՀՀ-ՏՄՊՊՀ-ԳՀԾՁԲ-20/35 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու հայտեր ներկայացրած անձանց, վերջիններիս կողմից ներկայացված հայտերի գնահատման և առաջարկված գների մասին:

2. Ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներ որոշելու մասին:

3. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու մասին:

1. ՀՀ-ՏՄՊՊՀ-ԳՀԾՁԲ-20/35 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՅՏԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԱՆՁԱՆՑ, ՎԵՐՋԻՆՆԵՐԻՍ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահ Նարա Դավթյանը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայությունների գները:

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը
1.	Կապի սարքավորումների վերանորոգման և սպասարկման ծառայություններ	300000

ՀՀ-ՏՄՊՊՀ-ԳՀԾՁԲ-20/35 ծածկագրով գնման հարցման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2020 թվականի մայիսի 25-ին, ժամը «17:00»-ին: ՀՀ կառավարության 2017թ.-ի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 32-րդ կետի 25-րդ կետով սահմանված հիմնավորումներ չեն ստացվել:

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն գրանցվել:

Հրավերում փոփոխություններ չեն կատարվել, այլ հարցումներ և պատասխաններ չեն գրանցվել:

ՀՀ-ՏՄՊՊՀ-ԳՀԾՁԲ-20/35 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու հայտեր են ներկայացրել հետևյալ անձինք /այսուհետ՝ նաև մասնակիցները/.

Հ/Հ	Մասնակցի անվանում	Հասցեներ	Էլ. փոստ
1	Տիգրան Սամվելյան Արմենակի ԱՁ	ՀՀ ք. Երևան, Ֆանարջյան փ. /Տ/ 5	tisamvel@yahoo.com հեռ. 091420871

Հանձնաժողովն արձանագրեց, որ՝

- Մասնակիցները հայտերը կազմել և ներկայացրել են ՀՀ-ՏՄՊՊՀ-ԳՀԾՁԲ-20/35 ծածկագրով գնման ընթացակարգի /այսուհետ՝ ընթացակարգ/ հրավերի /այսուհետ՝ հրավեր/ պահանջներին համապատասխան.,
- Մասնակցների կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը
- Մասնակցների կողմից ներկայացված հայտերում ներառված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված վավերապայմաններին.
- Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ հիմք ընդունելով տառերով գրվածը.

Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների և մասնակիցների զբաղեցրած տեղերի վերաբերյալ տեղեկատվությունը ներառված է ստորև ներկայացված աղյուսակում (այսուհետ՝ Աղյուսակ):

(ՀՀ դրամ)

Չափաբաժնի համարը	Մասնակցի		Մասնակիցների առաջարկած գները՝	
	Զբաղեցրած տեղ	Անվանում	Արժեք	Ընդհանուր գին
1	**Ընտրված**	Տիգրան Սամվելյան Արմենակի ԱՁ	300000	300000

Որոշվեց՝

1. Նարա Դավթյանի կողմից ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն.
2. Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով գնահատել բավարար:
3. Նիստը 1-ին չափաբաժնի մասով կասեցնել 2 աշխատանքային օրով: /բանակցություն/
4. Արմինե Ավետիսյանին՝ ծանուցել Տիգրան Սամվելյան Արմենակի ԱՁ-ին միաժամանակյա բանակցությունների մասին:

Կողմ՝ 5
Դեմ՝ 0

2. ԸՆՏՐՎԱԾ /ԵՎ ՀԱՋՈՐԴԱԲԱՐ ՏԵՂԵՐ/ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով այն, որ բավարար գնահատված հայտեր ներկայացրած Տիգրան Սամվելյան Արմենակի ԱՁ-ի գնային առաջարկը գերազանցում է ՀՀ-ՏՄՊՊՀ-ԳՀԾՁԲ-20/35 ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնով գնում կատարելու համար գնման հայտով սահմանված գինը, և համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի՝ մասնակցի հետ վարվեցին միաժամանակյա բանակցություններ՝ առաջարկված գնի նվազեցման նպատակով:
Բանակցությունների համար սահմանվեց ժամկետ՝ 15 րոպե տևողությամբ:
Բանակցությունների վերջնաժամկետին Տիգրան Սամվելյան Արմենակի ԱՁ-ի կողմից առաջարկած վերջնական գին սահմանվեց 47 000 ՀՀ դրամ:

Որոշվեց՝

1. Որպես ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներ հայտարարել Աղյուսակում համապատասխան տեղեր զբաղեցրած մասնակիցներին:

Կողմ՝ 5
Դեմ՝ 0

3. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Արմինե Ավետիսյանը ներկայացրեց պայմանգիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստի նախագիծը:

Որոշվեց՝

Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:

Կողմ՝ 5
Դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝

Ն. Դավթյան _____

Հանձնաժողովի անդամներ՝

Ա. Յոլչյան _____

Ա. Ստեփանյան _____

Մ. Ղազարյան _____

Մ. Մոշչենոկ _____

Հանձնաժողովի քարտուղար՝

Ա. Ավետիսյան _____